



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

19 մարտի 2018 թվական

3-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-րդ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.00

Տարոն Մարգարյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 16 անդամ՝

Արայիկ Հարությունյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Աննա Ասատրյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Սերգեյ Ղահրամանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Ալեն Սիմոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Արա Երնջակյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Անահիտ Բախշյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Անի Սամսոնյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Տիգրան Ավինյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Հարություն Բարայան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Զարուհի Բաթոյան՝ «ԵԼՔ» խմբակցություն,

Ռոզա Սիրունյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,

Աստղիկ Գևորգյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,
Արմեն Երեմյան՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,
Առաջին հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Արայիկ Հարությունյան, խնդրե՛մ:

Արայիկ Հարությունյան

-Շնորհակալություն, երկու հարց ունեմ: Առաջին հարցը՝ ինձ են դիմել Նուբարաշենի 11-րդ փողոցի հ. 12 շենքի բնակիչները մի շարք խնդիրներով: Մի խնդիրը, որ անձրևաջրերը լցվում էին նկուղ, վարչական շրջանի ղեկավար պարոն Կիրակոսյանի միջամտությամբ, կարծես թե, լուծում ստացել է:

Այստեղ կա երկրորդ հարց, որը կարծում եմ շատ ավելի լուրջ է և, եթե, հանրային լսումներ և քննարկումներ չլինեն բնակիչների հետ, ապա Նուբարաշենի այս հատվածում նույնպես խնդիրներ կլինեն: Նրանք հավաքել են 50%-ից ավելի բնակարանների ստորագրություն՝ հետևյալ խնդրով. բակում կար ապօրինի շենք-շինություն, որը բնակիչներն օգտագործել են որպես սգո արարողությունների, հարսանիքների համար տարածք, ամիսը մեկ կամ երկու անգամ, ոչ ավելի: Հիմա քաղաքային իշխանությունները և վարչական շրջանը որոշում են ընդունել՝ այս շենքն օրինականացնել և այնտեղ կազմակերպել բարեգործական ճաշարան:

Շատ լավ ձեռնարկ է, բայց եթե յուրաքանչյուրս մեզ վրա վերցնենք, որ բնակվում ենք այդ շենքում և բակի հենց մեջտեղում, որտեղ պետք է հանգիստ լինի կամ երեխաների համար խաղահրապարակներ լինեն, մարդկանց անդորրը չխաթարվի, ընդ որում բնակարանների ննջարանների մեծ մասն այդ հատվածում են գտնվում, և մարդիկ փաստացի հանգստանում են: Այստեղ խնդիր է առաջանում. պետք է բնակիչների հետ գալ ընդհանուր հայտարարի: Նրանք կտրականապես դեմ են, ասում եմ, 50% և ավելի բնակարանների ստորագրություններ կան, ովքեր համաձայն չեն: Չնայած դրան նախագիծն այնտեղ արդեն փակցվել է, ինչն էլ լրացուցիչ գայրույթ է առաջացրել բնակիչների մոտ:

Շնորհակալություն, կցանականայի այս հարցին պատասխաններ վարչական շրջանի ղեկավարը, ի՞նչ է արվում այս ուղղությամբ:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար Արթուր Կիրակոսյանը, խնդրե՛մ:

Արթուր Կիրակոսյան

-Պարո՛ն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, ավագանու հարգելի՛ անդամներ Նուբարաշենի 11-րդ փողոցի հ. 12 շենքի բակում՝ նախկինում այդ շենքի բնակիչների կողմից կառուցված շինությունը, որը, պարոն Հարությունյանի կողմից նշվեց, թե ինչ նպատակներով

է օգտագործվել, ներկայումս համայնքի կողմից որոշում է կայացվել, այլ տարածք չլինելու պատճառով, «Հայաստան առաքելություն» հասարակական կազմակերպության հետ տարեցների, թոշակառուների, խնամքից դուրս գտնվող միայնակ մարդկանց համար բարեգործական ճաշարան կազմակերպել, որտեղ նրանք հնարավորություն կունենան օգտվել միանգամյա տաք սնունդից:

Ես այդքան էլ համամիտ չեմ պարոն Հարությունյանի հետ, քանի որ մեզ մոտ նույնպես ստորագրահավաք կա՝ 25-ից ավելի ստորագրություններով, ովքեր տալիս են իրենց համաձայնությունը: Բնակիչների հետ անձամբ խոսել ենք, հասկացել են իրողությունը, և մեծամասնությունն իրենց համաձայնությունը տվել են: Այնտեղ կա 50 տնտեսություն, որից 10 բացակայում են կամ ապրում են վարձով:

Բնակիչների կողմից կա մտահոգություն նաև երեխաների համար նախատեսված խաղահրապարակի հետ կապված, այդ հարցը ևս կկարգավորվի, կնախատեսվի համապատասխան տարածք՝ խաղահրապարակ ստեղծելու համար:

Տարոն Մարգարյան

-Պարո՛ն Հարությունյան, այդ տարածքի վերաբերյալ որոշակի տեղեկատվության ենք տիրապետում նաև մենք: Կան երկու բնակիչ, ովքեր ժամանակին ցանկություն են ունեցել՝ այդ տարածքը սեփականացնելու, մենք դա իրենց թույլ չենք տվել:

Իմ կարծիքով, եթե բնակչությունը կառուցել է և դա համայնքի սեփականությունն է, համայնքի գույքը, այն կարող ենք օգտագործել այլ նպատակով: Մենք դեմ ենք շինության քանդմանը, քանի որ վարչական շրջանի դեկավարն իր խոսքում նշեց, որ շենքի բակը բարեկարգվելու է և բնակիչների համար հանգստի գոտի և խաղահրապարակ են ստեղծվելու:

Լավ կլինի նշված տարածքում բարեգործական ճաշարան ստեղծելը: Ընթացքում եթե տեսնենք, որ այցելուների թիվը մեծ է և բնակիչներին դրանով անհանգստություն է պատճառվում, այդ ժամանակ դեմ չեմ, կքննարկենք այլ վայր տեղափոխելու հարցը: Կարելի է փորձնական իրականացնել և փաստացի պատկերացնել իրավիճակը:

Արայիկ Հարությունյան

-Պարո՛ն քաղաքապետ, այդ երկու բնակիչը չեն բողոքում, բողոքողնրն ուրիշ են: Զգիտեմ ինչ 25 ստորագրության մասին է խոսքը, որովհետև 25 ավելի բնակարանների ստորագրություններ կան բնակիչների մյուս խմբի մոտ: Բարեգործական ճաշարանը շատ լավ է, բայց պարոն Մարգարյան, ես վստահ եմ, եթե Դուք ապրելիք այդ շենքում, նման հասարակական օբյեկտ չէիք ցանկանա, որ լիներ Ձեր բակում, քանի որ այդ շինությունն ուղիղ բակի մեջտեղում է գտնվում և բնակիչների համար լրացուցիչ անհանգստություն է առաջացնելու:

Երկրորդ հարցն ուղղում եմ արտաքին գովազդի և ձևավորման վարչության պետ Արազ Բաղդասարյանին կամ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Արա Սադոյանին:

Մաշտոցի պողոտայի և Ամիրյան փողոցի խաչմերուկում կա լեդ տիպի վահանակ, որը բնակիչների համար խնդիրներ է ստեղծում: Պատկերացնելու համար, ասենք դա մոտավորապես այն է, թե ինչպես են ԱԱԾ նկուղներում կամ բանտերում խոշտանգում դատապարտյալներին, երբ անընդհատ լույս են անջատում և միացնում: Այդպիսի թրթռացող լույսի տակ են ապրում մի շարք բնակիչներ:

Չէի ցանկանա, որ նմանատիպ իրավիճակ ստեղծվի նաև Բաղրամյան-Մոսկովյան խաչմերուկում: Իմ ունեցած տեղեկություններով՝ այն լավ նախաձեռնությունը, որը վերաբերում էր այդ խաչմերուկի մեջտեղում անցորդների համար կղզյակ ստեղծելուն՝ կանաչապատ կղզյակ, հիմա այդ կղզյակի մեջտեղում կանգնեցվելու է սյուն, որի վրա նույնպես լինելու են լեդ վահանակներ: Ես ցանկանում եմ, որպեսզի այս տեղեկությունը հերքվի կամ հաստատվի և, եթե հաստատվեց, ապա լուրջ միջոցներ պետք է ձեռնարկել:

Քաղաքը, իրոք, զարգանում է և նման վահանակներ, իհարկե, պետք են, բայց մենք երբ ենք սկսելու հաշվի առնել քաղաքի բնակչության շահերը: Դա վերաբերում է տասնյակ բնակարանների թե՛ Բաղրամյան պողոտայում, թե՛ Մոսկովյան փողոցում, քանի որ Մաշտոց-Ամիրյան խաչմերուկում այդ խնդիրը կա, որն օրենքով չի կարգավորվում:

Ես դիմել եմ առողջապահության պետական տեսչությանը, խոսել եմ քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության աշխատակիցների հետ: Օրենքում շատ մեծ բացթողում կա, մենք էլ այստեղ, որպես քաղաքային իշխանություն, առաջին հերթին պետք է առաջնորդվենք մեր բնակչության առողջության խնդիրներով:

Տարոն Մարգարյան

-Մաշտոց-Բաղրամյան-Մոսկովյան խաչմերուկում, որտեղ մասնավոր ընկերության կողմից այդ կղզյակը կառուցվում է, պայմանավորվածություն կա, որ այդտեղ լինի գովազդային վահանակ, որպեսզի հետագայում դրա շահագործումը, շինարարական ծախսերի փոխհատուցումն ապահովվի:

Նման մտահոգություն էթե կա, ներդրողին հրահանգ կտրվի, այդտեղ լեդ էկրաններ տեղադրելու դեպքում պարտադիր ունենան հարակից շենքերի բնակիչների համաձայնությունը, որի պարագայում, կարծում եմ, մտահոգությունները կվերանան:

Պարոն Բաղդասարյան թույլտվությունը տրամադրելու ժամանակ այդ պայմանը պետք է պարտադիր լինի: Համաձայնությունը չլինելու դեպքում ոչ լեդային տարբերակով կանդրադառնանք այդ հարցին: Ամեն դեպքում այդ աշխատանքներն իրականացնողներն

այդտեղ հետագայում կանաչ տարածքի պահպանումն են ապահովելու, որի համար իրենց որոշակի եկամտի աղբյուր է անհրաժեշտ, և մենք պետք է այդ հնարավորությունն ընձեռենք՝ չվնասելով մեր քաղաքացիների շահերը:

Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Աննա Ասատրյան, խնդրե՛մ:

Աննա Ասատրյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ընթացիկ տարվա հոկտեմբերի 11-ին և 12-ին Երևանում տեղի է ունենալու Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովը:

Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում քաղաքապետարանի աշխատակազմի կողմից այս կարևորագույն միջազգային միջոցառումը պատշաճ կերպով կազմակերպելու ուղղությամբ:

Տարոն Մարգարյան

-Գիտեք ստեղծված է պետական հանձնաժողով, որում ընդգրկված են նաև Երևանի քաղաքապետարանից ներկայացուցիչներ, որտեղ հստակ անելիքներ ունենք: Ակտիվ համագործակցում ենք Արտաքին գործերի նախարարության հետ:

Բոլոր համապատասխան ծառայություններն աշխատում և անում են հնարավորինը քաղաքը պատշաճ տեսքի բերելու համար, որպեսզի կարողանանք այդ կարևորագույն միջոցառումը բարձր մակարդակով անցկացնել: Հիմնական միջոցառումը լինելու է Երևան քաղաքում. անհրաժեշտության դեպքում բոլոր պետական կառույցներին աջակցում ենք: Մասնակցություն ենք ունենալու նաև «Ֆրանկոֆոն ավանի» մշակութային միջոցառումներին: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժինը, արտաքին ձևավորման և գովազդի վարչությունը և այլ պատասխանատուներ համագործակցում են Ֆրանկոֆոնիայի կազմակերպիչների հետ, որպեսզի այն ամենն ինչ քաղաքապետարանի լիազորությունների շրջանակում է, ամբողջությամբ իրականացվի:

Քաղաքապետարանում ստեղծված է աշխատանքային խումբ, որը ղեկավարում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը: Այդ ամբողջ գործընթացն իր հսկողության տակ է:

Աննա Ասատրյան

-Շնորհակալություն սպառիչ պատասխանի համար և հաջողություն աշխատանքային խմբին:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Սերգեյ Ղահրամանյան, խնդրե՛մ:

Մերգեյ Ղահրամանյան

-Պարոն՝ Մարգարյան, ուզում եմ մի բան փաստել, որ թե՛ զծով ահազանգերի արձագանքները, այսպես ասած պատասխանները, ամիս առ ամիս ավելի վատ է տեղի ունենում: Մենք ահազանգում ենք թե՛ զհիմ, այնուհետև բաշխվում է ըստ վարչական շրջանների աշխատակազմերի և կատարված գործողությունները՝ տոկոսայնությունը գնալով ավելի է պակասում, դա որպես փաստ եմ ցանկանում արձանագրել, չհաշված ասֆալտապատումը, որը ձմռանը չէր իրականացվում:

Առաջին հարցս կապված է «Հայրենիք» կինոթատրոնի հարակից ստորգետնյա անցման հետ, որտեղ մինչև 2022թ. նոր ճանապարհ, այսպես ասած, էստակադա պետք է կառուցվի: Հունվար ամսին դիմել էի հարցով, որ այդ ստորգետնյա անցումում հակահիգիենիկ իրավիճակ է տիրում, բայց ոչ ամբողջ մակերեսով, քանի որ 2 թե 3 կողմից ստորգետնյա անցումը փակվում է, իսկ 1 կողմից չի փակվում և գիշերային ժամերին, իհարկե, վատ երևույթ է, քաղաքացիներն այնտեղ հակահիգիենիկ իրավիճակ են ստեղծում:

Դրանից մոտ 1 ամիս անց կրկին եղել եմ այդ տարածքում: Իհարկե չի արդարացվում քաղաքացիների կողմից այդ հատվածում փողոցն առանց ստորգետնյա անցման հատելը, սակայն նրանք այդ հանգամանքով են բացատրում դա:

Կցանկանայի, որպեսզի այս հարցին ուշադրություն դարձնեի Շենգավիթ վարչական շրջանը, քանի որ այնտեղ որևիցե աշխատանք դեռևս չի իրականացվել:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարն այստեղ է, պարոն Մարգարյան անպայման Ձեր հսկողության տակ կպահեք այդ տարածքը:

Ինչ վերաբերում է ձմռան ամիսներին ասֆալտապատման աշխատանքներին, ինչու՞ էք զարմացել, որ դրանք չեն իրականացվել:

Մերգեյ Ղահրամանյան

-Ո՛չ, ես նկատի ունեմ դա չհաշված:

Տարոն Մարգարյան

-Լավ, իսկ թե՛ զծերի հետ կապված ի՞նչ խնդիր կա:

Մերգեյ Ղահրամանյան

-Թե՛ զծերի հետ կապված վարչության պետի հետ մի քանի անգամ խոսել ենք հեռախոսով: Հարցը ոչ թե իրենց մեջ է, այլ դրանց բաշխումը վարչական շրջաններին կամ հատկապես «Վեոլիա Ջուր» ընկերությանը, որի պատասխանատվության տակ են գտնվում դիտահորերը: Այդ հարցերն ուղղակի անպատասխան են մնում կամ ասում են, որ աշխատանքներն իրականացվել են, բայց իրականում բացարձակապես ոչինչ չի արվել:

Տարոն Մարգարյան

-Շատ բարի, պետք է մեր քաղաքացիներին խնդրենք, որ այն ժամանակ, երբ իրենց պատասխան է գրվում, որ աշխատանքներն իրականացվել են, սակայն պատասխանը չի բավարարում և աշխատանքներ չեն տարվել, կրկին զանգեն թեժ գիծ: Համոզված եղեք, որ այդ հարցը մանրամասն կուսումնասիրվի և, նրանք, ովքեր սխալ պատասխան են տվել, խիստ կպատժվեն:

Մերգեյ Ղահրամանյան

-Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Ալեն Սիմոնյան, խնդրե՛մ:

Ալեն Սիմոնյան

-Պարո՛ն քաղաքաքապետ, մոտ մեկ ամիս առաջ համացանցում մի տեսանյութ հայտնվեց, որում երևում էր, թե ինչպես են քաղաքապետարանի աշխատողները Հյուսիսային պողոտայում մկրատով կտրատում լուսային լարերը և լույսերը:

Ես հարցում ուղարկեցի և ի պատասխան ստացա գրություն, որտեղ գրված է, որ **2 900 000** դրամ գումար է հատկացվել այդ լույսերն այնտեղ անցկացնելու համար:

Խնդրում եմ բացատրեք, թե որն էր իմաստը ծախսելու **2 900 000** դրամ **15** օրվա համար, որից հետո մկրատով կտրատել և Հյուսիսային պողոտայում թափել դրանք, սա առաջին հարցը:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի արտաքին գովազդի և ձևավորման վարչության պետ Արագ Բաղդասարյանը:

Արագ Բաղդասարյան

-Պարո՛ն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, նախ նշեմ, որ այդ ծրագիրը Հյուսիսային պողոտայում իրականացվել է համայնք-մասնավոր համագործակցության արդյունքում: Լույսերի տեղադրման աշխատանքների համար Երևանի քաղաքապետարանից ծախսվել է **2 900 000** դրամ:

Լույսերը, որոնք տեղադրվել են, մասնավոր կազմակերպությունների կողմից տրամադրված լույսեր են եղել, որոնց մեծ մասը՝ մոտավորապես **80%**, հնարավոր է եղել պահպանել մյուս տարվա օգտագործման համար, իսկ **20%** հնարավոր չի եղել պահպանել, տեսանյութում երևի այդ **20%** է երևում:

Ալեն Միմոնյան

-Ճիշտն ասած, չհասկացա, թե ինչ կարիք կար կտրելու, բայց ինչևէ:

Երկրորդ հարցը. պարոն քաղաքապետ մեկ ամիս առաջ շրջանառության մեջ դրվեց լրագրողների համար, իբր լավ պայմաններ ձևավորելու նպատակով, նրանց դահլիճից դուրս հանելու նախաձեռնությունը: Մենք բոլորս ականատես եղանք, թե՛ հասարակական կազմակերպությունների, թե՛ Մարդու իրավունքների պաշտպանի, թե՛ խմբագրերի, լրատվամիջոցների բացասական վերաբերմունքին: Այսօր կա նաև այդ սրահը, որը, բնականաբար, գովելի է և ևս մեկ հնարավորություն է:

Հարցս հետևյալին է վերաբերում, արդյոք այդ արձագանքներից հետո Դուք հրաժարվել եք լրագրողների մուտքը դահլիճ սահմանափակելու մտքից, քանի որ դա սահմանափակում է, և, խնդրում եմ, պետք չէ դա որպես բարեփոխում կամ որևիցե դրական քայլ ներկայացնել:

Խնդրում եմ ասեք, հրաժարվե՞լ եք այդ մտքից, թե այդ հարցը դեռ օրակարգում է, շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Մենք դեմ ենք այն ձևակերպմանը, որ մեր գործընկերները և որոշ լրատվական կազմակերպություններ դա ներկայացնում են որպես սահմանափակում: Օրենքով հստակ նշված է ապահովել հրապարակայնություն, և մենք պարտավոր ենք դա իրականացնել: Օրենքից ոչ մի շեղում չենք անելու և օրենքով սահմանված կարգով հրապարակայնությունն ապահովելու ենք, դա սահմանափակում չէ:

Ինչ վերաբերում է մեր կողմից նախատեսվող բարեփոխման աշխատանքներին, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետն իր հարցազրույցներում և հայտարարության մեջ հստակ ներկայացրել է այդ մասին:

Լրագրողների կողմից ներկայացված բոլոր առաջարկներն ամփոփման փուլում են, որի ավարտից հետո լրացուցիչ կտեղեկացնենք:

Դուք, եթե այսօր օրակարգի 1-ին և 2-րդ հարցերի ժամանակ ներկա լինեիք, կտեսնեիք, որ մի լրագրող նստել էր Անի Խաչատրյանի տեղը և իմ կողմից նկատողություն ստանալուց հետո միայն վեր կացավ այդ տեղից:

Այսօր բոլորս տեսանք, թե որքան հարմար է սրահը, որն առանձնացված է լրագրողների համար, որտեղ ապահովված է բարձր, որակյալ ուղիղ եթերով կապ: Սա փորձնական էր, լրագրողները մեկ անգամ ևս կարող են իրենց դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնել:

Նշեմ, որ մենք կողմ ենք հրապարակայնությանը, միշտ բաց և թափանցիկ ենք աշխատելու:

Ալեն Միմոնյան

-Պարոն քաղաքապետ, ես եղել եմ սրահում, այն իրոք լավ է կահավորված, բայց ակնհայտ է, որ լրագրողները սրահից չեն օգտվում: Այսօր, երբ մենք այնտեղ էինք, ընդամենը մեկ լրագրող էր նստած:

Ես դեմ չեմ, որ լրագրողները նստեն ազատ աթոռներին, դա քննարկելու խնդիր չէ: Ես շատ ուրախ եմ, որ ասում եք չեք սահմանափակելու: Ես որպես իրավաբան, ինչպես նաև որպես մարդ, ով լրատվական կայք է ներկայացնում և ոչ մեկ լրատվական կայք, ցանկանում եմ ասել, որ լրատվական համայնքի մեծամասնությունը դեմ է նման քայլի, որը նաև իր գործողություններով է ցուցադրում:

Ես կոչ եմ անում, իսկապես, հետևել օրենքի տառին, որտեղ ասված է, որ հրապարակային պետք է լինեն ավագանու նիստերը, այն է՝ ազատ և մատչելի: Այդ սրահը կարելի է նույնպես տրամադրել լրագրողներին, շնորհակալ եմ:

Տարոն Մարգարյան

-Հրապարակայնությունը մեր կողմից միշտ ապահովվելու է:

Պարոն Միմոնյան, որ ասում եք այնտեղ լրագրող չի եղել, Ձեր ամբողջ խմբակցությունով գնացել դահլիճում նստել և խանգարել եք լրագրողների աշխատանքը, դրա համար էլ լրագրողներ չեն եղել: Դուք, որ ձեր տեղերում լինեիք, լրագրողներն այնտեղից հրապարակայնությունը կապահովեին:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արա Երնջակյան, խնդրե՛մ:

Արա Երնջակյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, Երևան քաղաքի **2018թ.** զարգացման ծրագրում ընդգրկված են Դավթաշեն-Աշտարակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածների կառուցման աշխատանքները:

Խնդրում եմ Ձեզ, տրամադրել տեղեկատվություն ո՞ր փուլում են նշված աշխատանքները:

Տարոն Մարգարյան

-Ձեր հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը, խնդրե՛մ պարոն Նիկոյան:

Վահե Նիկոյան

-Շնորհակալություն, պարոն Երնջակյան, Դավթաշեն-Աշտարակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածները Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի մաս են կազմում, կարծում եմ, ամենակարևոր ծրագրի, որն այսօր իրականացվում է:

Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածը **2017թ.** ապրիլ ամսին է մեկնարկել, աշխատանքներն իրականացվում են ժամանակացույցի համաձայն: Աշխատանքները նախատեսվում է ավարտել **2018թ.** տարեվերջին և կապահովվի կապը Դավթաշեն և Աջափնյակ վարչական շրջանների միջև:

Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածը շրջանցիկ ճանապարհի ամենամեծ կտորն է, որի շինարարական աշխատանքների մեկնարկը տրվեց այս տարվա հունվար ամսին: Շուրջ **9.4** կմ երկարությամբ ճանապարհի կառուցման աշխատանքները նույնպես իրականացվում են՝ համաձայն ժամանակացույցի, նախատեսվում է ավարտել մեկնարկից **24** ամսվա ընթացքում՝ **2020թ.** տարեակգրին:

Տարոն Մարգարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անահիտ Բախշյան, խնդրե՛մ:

Անահիտ Բախշյան

-Շնորհակալություն: Պարոն Մարգարյան առաջին հարցս ուղղված է անշարժ գույքի կառավարման վարչության պետ պարոն Ամյանին:

Պարո՛ն Ամյան, այնուամենայնիվ, ուզում եմ հասկանալ Երևանի աճուրդների և մրցույթների հայտարարությունների մեջ նշված հասցեները եթե ներառված չեն, ապա դրանք ո՞ր ցուցակից են հայտնվում աճուրդի և մրցույթների ցուցակում: Այսինքն, եթե Երևանի սեփականության գույքի ցուցակում դրանք չկան, ապա որտեղի՞ց են դրանք գալիս աճուրդի, հայտարարությունների ցուցակ, սա առաջին հարցը:

Երկրորդ հարցը. ես գիտեմ Համաշխարհային բանկի կրթության ոլորտի բարեփոխման ծրագրով նախադպրոցական հիմնարկների ցանցը մեծացնելու ծրագիր է իրականացվում, որի ժամանակ դպրոցներում **5-6** տարեկանների համար նախապատրաստում են նախադպրոցական կրթություն իրականացնել, որը, եթե իրականացվի մարզերում, ինչ-որ տեղ հասկանալի է:

Երևանում այս ծրագիրը, ես գիտեմ մի դպրոց, թիվ **20** դպրոցը, որտեղ իմ թոռնիկն է սովորում, այնտեղ ծնողներին առաջարկել են մասնակցել այդ ծրագրին, այնքանով որքանով **75%-ը** Համաշխարհային բանկն է ֆինանսավորում, **25%-ը**՝ համայնքը:

Հիմա համայնք ասելով այնտեղ Երևան համայնքն է, բայց ծնողներն էլ են մասնակցելու, որին դեմ չեմ, եթե ծրագիրը նպատակային է:

Դուք չեք կարծում, որ Երևանում մանկապարտեզներ ունենք և կարող ենք բոլոր երեխաներին մանկապարտեզներում տեղավորել, այդ 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ծրագիրն ուղղակի երեխաների ֆիզիկական առողջությանը չի նպաստում, որովհետև նրանք 4 ժամ պետք է մնան դպրոցում առանց սննդի, առանց քնելու և դա պետք է կոչվի մանկապարտեզ:

Մի խոսքով՝ Երևանում այս ծրագիրը որքանով է ներդրված և ի՞նչ սկզբունքով եք ընտրում դպրոցները և իսկապես քանի՞ տոկոսով պետք է համայնքը և ծնողները մասնակցեն այդ դրամահավաքությանը:

Տարոն Մարգարյան

-Առաջին հարցին կպատասխանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

Արսեն Ամյան

-Տիկի՛ն Բախշյան, բազմիցս պարզաբանել ենք օրենսդրությունը, մասնավորապես նշել ենք, որ համայնքին օրենքի ուժով փոխանցվել է **11 330** հա հողամաս, և այն հողամասերը, որոնք կառուցապատման իրավունքով ներկայացվում են մրցույթի ոչ թե աճուրդի, դրանք որևէ ցանկում ներառելու անհրաժեշտություն կամ օրենսդրական պահանջ չունեն:

Այսինքն, եթե մրցույթի փաթեթներում ներառված հողամասերը համայնքային սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման փաստաթղթերում չեք գտնում, չի նշանակում, որ դրանք այդտեղ պետք է լինեն, իսկ Դուք չգտաք:

Կարծում եմ, որ համայնքային գույքի շրջանառությունը, օտարման և կառուցապատման տրամադրման հետ կապված առանձնահատկությունները հասկանալու, վերլուծելու համար ընդամենն անհրաժեշտ է ուսումնասիրել գործող օրենսդրությունը:

Օտարման ծրագիրը, կառավարման կարգը, եթե մանրամասն ուսումնասիրվի, համոզված եմ այն հարցերը, որոնք հիմա Ձեզ մոտ առաջանում են, չեն լինի, և տարբեր ցանկեր իրար հետ համեմատելու անհրաժեշտությունը, կարծում եմ, կվերանա:

Անահիտ Բախշյան

-Պարո՛ն Ամյան, թույլ տվեք Ձեզ հիշեցնել. ասում եք, մրցույթների ցուցակները, ինչ-որ տեղ, ենթադրենք համայնքային սեփականությանը տրվածը չեք դնում, բայց վերջերս աճուրդի ցուցակում **55** անուն դրված գույքից, մենք Ձեր աշխատակցի հետ նայել ենք **55-ից 8-ը** չկա: Դա

գույք է, դա աճուրդ է արդեն, այդտեղ կառուցապատման իրավունք չէ, դա գույք է, ինչու՞ դրանք չկան, ո՞ր ցուցակում են գրված, որ այս ցուցակում չկան:

Արսեն Ամյան

-Տիկի՛ն Բախշյան, նորից եմ կրկնում, որպեսզի այս հարցերը չտաք, օտարման կարգին ծանոթացեք: Օտարման ենթակա գույքային միավորները, կարգը սահմանում է, որ գույքերն են ենթակա օտարման, կարող է լինել գույք, որ ոչ մի ցուցակում ընդգրկված չլինի՝ կարգի համաձայն, բայց ներկայացված լինի օտարման: Այդ պատճառով, որպեսզի տարբեր ցանկերում չփնտրեք, ավելի լավ է միանգամից եկեք օտարման կարգը կբացատրենք:

Տարոն Մարգարյան

-Պարո՛ն Ամյան, չորս տարի շարունակ տիկին Բախշյանն այս հարցին անդրադառնում է: Նա ինձ մոտ էլ է իր մտահոգությունն արտահայտել, պարզ ասեմ, նա մտածում է, որ կարող է գոյություն ունի երկրորդ ցուցակ:

Տիկի՛ն Բախշյան, հավաստիացնում եմ, որ երկրորդ ցուցակ գոյություն չունի: Կիսնդրեմ Ձեզ պարոն Նիկոյանի, պարոն Ամյանի հետ առանձին քննարկեք այդ հարցը, միգուցե բաց տեղեր կան, որոնց մասին տեղեկացված չեք: Ամբողջությամբ կներկայացվի Ձեզ, որից հետո, եթե հարցեր լինեն, պատրաստ եմ անձամբ պատասխանել:

Երկրորդ հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը:

Արամ Սուքիասյան

-Շնորհակալությու՛ն, նախակրթարանները, այո՛, Երևան քաղաքի համար բավարար են: Մենք միշտ ձգտում ունենք ավելի ընդլայնելու և ինչպես նկատեցիք, այսօր էլ ձեր որոշմամբ ևս երկու շենք հետագայում պիտի դառնան մանկապարտեզներ:

Ինչ վերաբերում է դպրոցներում նախակրթարան ունենալու հարցին, դա բավականին ծախսատար գործընթաց է: Դուք իրավացի եք, այն պետք է լինեք ավելի մարզերին բնորոշ, որովհետև ոչ բոլոր մարզային համայնքներում է, որ ունեն մանկապարտեզի և դպրոցի հնարավորություն և գոնե մեկ, երկու տարի երեխաներին նախակրթարան ունենալուն միտված, այս որոշումը կայացվեց: Մա, իհարկե, կրթության նախարարության թեման է, Ձեր մտահոգություններն ավելի ճիշտ կլինեք ուղղել տվյալ քաղաքականությունը վարող մարմնին:

Ներկայումս մենք ունենք չորս դպրոց, որտեղ կան նախակրթարան ունեցող դասարաններ և ուսումնասիրվում են դրանց արդյունավետությունը:

Դուք իրավացի եք, այն ունի իր սահմանված պահանջները՝ այդ թվում հատուկ քննարաններ ունենալու, իրենց ճաշասենյակն ունենալու և այլն: Մա երկուստեք, այդ թվում և ծնողի համար կարող է խնդիրներ առաջացնել: Այս պահին վերջնական մոտեցում չունենք,

ինչպես նկատում էք, անկախ ֆինանսավորող կողմից, արագ գործողությունների չենք դիմում, քանի որ ֆինանսավորումից, սենյակներ ունենալուց զատ անհրաժեշտություն է առաջանում համապատասխան դրույքներով ապահովելու մանկավարժների, մասնագետների և այլն, շնորհակալություն:

Անահիտ Բախշյան

-Շնորհակալություն՝ն, պարոն Սուքիասյան, համենայնդեպս, այն դպրոցը, որի մասին ասացի, չեմ կարծում ունի ֆիզիկական այդ հնարավորությունը՝ ստեղծելու այն պայմանները, ինչի մասին Դուք ասացիք: Ինչպես են ընտրում այն դպրոցները և ինչու՞ Երևանում:

Արամ Սուքիասյան

-Հանրապետությունում, եթե կա կարգը, հետևաբար դա վերաբերում է նաև Երևանին: Կրկնում եմ, որ որոշակի փորձ արված է, հիմա ուսումնասիրվում է արդյունավետությունը, որից հետո կհասկանանք և կունենանք ավելի հստակ մոտեցում ու դիրքորոշում այդ հարցի վերաբերյալ:

Անահիտ Բախշյան

-Տեղյակ էք, որ ծնողներից արդեն գումար են հավաքում այնտեղ:

Արամ Սուքիասյան

-Այդ թեման ինձ կասկածի տեղիք է տալիս:

Տարոն Մարգարյան

-Պարոն Սուքիասյան միասին այդ հարցը կքննարկեք և կպարզաբանեք իրողությունը: Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ:

Անի Խաչատրյան

-Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքում ասվում է, որ մրցույթները հաղթում են նվազագույն գնային առաջարկ ներկայացրած կազմակերպությունները: Ես եղել եմ բոլոր դպրոցների սպասարկման կետերում և Երևան քաղաքի հիմնական դպրոցների սննդի կետերը երեք անգամ շուկայականից բարձր գներով են սպասարկվում: Պայմանագրերն ինչու՞ մինչև այսօր չեն խզվել և քաղաքապետարանն ինչու՞ չի հետևվում օրենքի պահանջին:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

Վահե Նիկոյան

-Հանրակրթական դպրոցներում սննդի մատակարարման գործընթացը որևէ կապ չունի «Գնումների մասին» օրենքի հետ: Ո՛չ քաղաքապետարանը, ո՛չ դպրոցները գնում չեն իրականացնում և, բնականաբար, այդ օրենքով կարգավորել չեն կարող: Եթե խոսքը

բուֆետներին է վերաբերում, ապա բուֆետների տարածքները սահմանված կարգով տրամադրվել են վարձակալության՝ համապատասխան սննդի գործընթաց կազմակերպելու համար: Այստեղ ո՛չ «Գնումների մասին» օրենքը, ո՛չ գնումների հսկողությունը, ո՛չ պայմանագրի խզման հիմքեր, համենայնդեպս, ինձ համար տեսանելի չեն:

Անի Խաչատրյան

-Ի՞նչ հիմքով են հաղթող ճանաչվել կազմակերպությունները՝ կոնկրետ այդ երեքը:

Վահե Նիկոյան

-Խոսքը վարձակալության մասին է:

Անի Խաչատրյան

-Ո՛չ: Սնունդ սպասարկող կազմակերպությունները՝ «Համեղ պատառ», «Սահականուշ», «Ֆան Ֆան»:

Վահե Նիկոյան

-Նրանք վարձակալության հիմունքներով զբաղեցնում են տարածքներ, որտեղ մատակարարում են սնունդ: Սնունդի մատակարարումը դպրոցներում գնման գործընթաց չէ և դրա դիմաց ո՛չ դպրոցը, ո՛չ համայնքը չեն վճարում: Դրանք վարձակալությամբ տրված տարածքներ են:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Անի Սամսոնյան, խնդրե՛մ:

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ ղեկտեմբերի 18-ին ես Ձեզ գրավոր փոխանցել էի քաղաքացիների դիմումը կապված փոքր կենտրոնը Հրազդանի կիրճին միացնող թունելի հետ: Քաղաքացիները մասնավորապես բողոքում էին, որ այս թունելում մշտապես տիրող զարշահոտությունը և ցենզուրայից դուրս արտահայտությունները, որոնք գրառված են թունելի պատերին տհաճություն են պատճառում անցորդներին, ովքեր իրենց երեխաներին տեղափոխում են Սանկական երկաթուղի: Նշեմ, որ սա խնդիր է նաև զբոսաշրջիկների համար:

Ես ստացել էի պատասխան, որ տարվում են աշխատանքներ թունելի մաքրման շուրջ, բայց, փաստորեն, հայիոյախառն արտահայտությունների հետ կապված խնդիրը դեռ մնում է: Կա նաև մեկ այլ խնդիր, որ քաղաքացիները թունելով անցնելիս զգում են անվտանգության խնդիր, այն առումով, որ թունելի պատերի ծեփը թափվում է նրանց գլխին:

Ինձ հետաքրքրում է հետևյալ հարցը. արդյոք Կենտրոն վարչական շրջանի ղեկավարն ունի որևէ համալիր ծրագիր այս թունելի բարեկարգման համար, շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Տիկի՛ն Սամսոնյան, դա միայն Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի գործը չէ, մեր բոլորի գործն է: Բանակցություններ են տարվում ներդրողների հետ՝ հասկանալու համար ինչ պայմաններով կարելի է տրամադրել այդ տարածքը, այնտեղ բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է տարածքի մաքրման աշխատանքներին, մարտի 31-ին շաբաթօրյակ և ծառատունկ է լինելու: Կինդրեմ հասարակական կազմակերպությունների հետ ձեր մասնակցությունն ունենաք այդ տարածքի մաքրման աշխատանքներին:

Անի Սամսոնյան

-Շատ լավ է մասնակցությունը նման ծրագրերին, բայց ես կարծում եմ, որ այնպիսի գործը, ինչպիսին այդ թունելի բարեկարգումը և մաքրության պահպանումն է դա առաջին հերթին Երևանի քաղաքապետարանի պատասխանատվությունն է, իսկ քաղաքացիները որքանով որ կարող են կօզնեն:

Ես ուզում եմ հասկանալ կա՞ն հստակ ժամկետներ, որոնց ընթացքում մենք կարող ենք ունենալ բարեկարգված թունել:

Տարոն Մարգարյան

-Ո՛չ, դեռ ուսումնասիրության փուլում է, ավարտից հետո հստակ ժամկետներ կսահմանվեն: Բոլորիս պարտականությունն է մաքուր պահել մեր քաղաքը:

Մենք տարվա մեջ մի քանի անգամ դիմում ենք բոլոր հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև մեր քաղաքացիներին, որ միանան ավագանու անդամներին, Երևանի քաղաքապետարանի աշխատակիցներին միասին մաքրենք մեր քաղաքը:

Անի Սամսոնյան

-Շնորհակալությու՛ն պարոն քաղաքապետ, պետք չէր հուշել, ես այդ մասին շատ լավ գիտեմ: Շնորհակալություն պատասխանի համար:

Տարոն Մարգարյան

-Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Տիգրան Ավինյան, խնդրե՛մ:

Տիգրան Ավինյան

-Շնորհակալությու՛ն, պարոն Մարգարյան, ենթադրում եմ տեղյակ եք, որ «ԵԼՔ» պատգամավորական ֆրակցիան Ազգային ժողովում կազմակերպել էր մարտի 1-ի իրադարձություններին նվիրված լուսմներ: Լուսմների ժամանակ անկյունաքարային հարցերից մեկը՝ զոհերի ընտանիքներին փոխհատուցման հարցն էր:

Այսօր Դուք ուշագրավ հայտարարություն արեցիք, որտեղ նշված էր, որ այդ ընտանիքները գտնվում են քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում: Կցանկանայի ավելի մանրամասնեիք, թե ի՞նչ բնույթ է կրում այդ ուշադրությունը, արդյոք բոլոր ընտանիքների մասին է խոսքը և, առհասարակ, ի՞նչ է նշանակում Ձեր հայտարարությունը: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Վարչական շրջանների ղեկավարների մոտ, ըստ բնակության վայրի, կան հստակ տվյալներ այդ ընտանիքների մասին: Նրանց կողմից բարձրացված հարցերը վարչական շրջանների աշխատակազմերում առանձին են քննարկվում և առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերվում նրանց:

Տիգրան Ավինյան

-Ընդմիջման ընթացքում խոսեցինք երկու ընտանիքի ներկայացուցիչների հետ, նրանք տեղեկացված չէին այս հատուկ մոտեցման մասին, հուսով եմ նրանք լսեցին Ձեզ:

Երկրորդ հարցս Գրիգոր Լուսավորչի փողոցի և Մաշտոցի պողոտայի խաչմերուկի ստորգետնյա անցումին է վերաբերում: Կցանկանայի տեղեկանալ, ի՞նչ փուլում է գտնվում ՄԱԿ-ի հետ այդ ընդհանուր նախաձեռնությունը, ավագանու նախորդ նիստից հետո կա՞ առաջընթաց, կունկրետ առաջարկություններ քննարկվում են, թե՛ ոչ: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Տեղյակ եք, որ այն հատվածում, որը մասնավոր սեփականություն է, վերջերս հրդեհ տեղի ունեցավ: Դիմել ենք դատարան, քանի որ որոշակի առարկություններ կային սեփականատերերի հետ: Մեր նպատակն է, այդ հատվածը դարձնել հանրային, որպեսզի կարողանանք ամբողջովին վերանորոգել և ստորգետնյա անցումը պատշաճ տեսքի բերել: Հրդեհից հետո այնտեղ արդեն որոշակի աշխատանքներ իրականացվել են:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի ծրագրով նախատեսվող աշխատանքների իրականացմանը, դրանք դեռ բանակցային փուլում են, սակայն քանի որ սեփականատիրոջ հետ խնդիր ունենք, պետք է այդ հարցը լուծել: Գործընթացն աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից ամենօրյա հսկողության տակ է, ցանկանում ենք հնարավորինս շուտ այդ խնդրին լուծում տալ և բարեկարգ ստորգետնյա անցում հանձնել քաղաքացիներին:

Տեղեկացնեմ, որ նմանատիպ խնդիր ունենք նաև Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցումի հետ կապված: Գլխավոր պողոտայի այգին, որ կառուցվում է, սեփականատիրոջ համաձայնությունն արդեն կա, մոտ ժամանակներս կսկսեն աշխատանքները: Ստորգետնյա անցումը կվերանորոգվի և պատշաճ տեսքի կբերվի: Մեզ համար առաջնային է քաղաքի ստորգետնյա բոլոր անցումների խնդիրները լուծելը:

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Հարգելի՛ գործընկերներ, վերջին շրջանում ուսումնասիրել եմ տարբեր երկրների մայրաքաղաքների քաղաքային խորհրդի փորձերը, այսինքն՝ մեր ավագանու ինստիտուտի փորձերը, ինչպե՛ս են նրանք ղեկավարում և գործում որպես մարմին: Կցանկանայի որոշակի դիտարկումներ հայտնել, որոնց վերաբերյալ էլ կհղեմ հարցս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մայրաքաղաքների մեծամասնությունում քաղաքային խորհուրդներն ունեն քաղաքային խորհրդի ղեկավար, ով, ըստ էության, քաղաքային խորհրդի կառավարող մարմինն է, ինչպես Ազգային ժողովի նախագահը, և քաղաքային խորհուրդն է ձևավորում իր օրակարգը: Այս բովանդակության ամբողջ նպատակը տարանջատելն է օրենսդիր մարմինը, այսինքն՝ ավագանին և գործադիր մարմինը:

Պարոն Մարգարյան Դուք և Ձեր առաջին տեղակալը նույնպես հանդիսանում եք ավագանու անդամներ, չեք կարծում, որ ավագանու ինստիտուտը, որպես օրենսդիր մարմին և գործադիրի այս միախառնումը, խնդիրներ է առաջացնում և այդ փոխզույգման մեխանիզմները, որոնք պետք է լինեին գործադիրի և օրենսդիրի միջև, ըստ էության, չեն գործում: Դուք, որպես գործադիր մարմնի պատասխանատու, շատ հարցերի ինքներդ պատասխանելով՝ հնարավորություն չեք ընձեռում ավագանու անդամներին հարցերին իրենց տեսանկյունից մոտենալու, Ձեր մասնակցությամբ: Դուք տեղյակ եք, Դուք պատասխանում եք հարցերին, իսկ ավագանու անդամները, հենց «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամներն իմանալով, որ գործադիրն իրենց պատասխանատու կուսակցությանն է, համոզված են, որ հարցերին պատասխանողներ կլինեն: Այսպիսով, ըստ էության, ավագանու անդամների միջև առանձին բանավեճ տեղի չի ունենում: Բանավեճ է տեղի ունենում ավագանու անդամի և գործադիրի միջև:

Չե՞ք կարծում, որ կարելի է դիտարկել հնարավորություն կոնկրետ Երևանում ներդնելու այդ փորձը՝ տարանջատել գործադիրն օրենսդիրից, ձևավորել ավագանու խորհրդի ղեկավար և ավագանու խորհրդի մարմինը գործադիրի առաջարկություններով կձևավորի ավագանու նիստերի օրակարգը:

Տարոն Մարգարյան

-Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ ընտրել ենք այս մոդելը: **2009թ.**, երբ Երևանը դարձավ համայնք, այս մոդելը կիրառվեց: Այստեղ էլ են տարանջատված գործադիր և օրենսդիր մարմինները, բայց Երևանի քաղաքապետին և քաղաքապետի առաջին տեղակալին

հնարավորություն է տրված նիստերը վարելու: Քաղաքապետի և առաջին տեղակալի բացակայության ժամանակ նիստը վարում է ավագանու ամենատարեց անդամը: Համեմատելով մեզ մոտ և որոշ քաղաքներում գործող մոդելները, նրանց մոտ ավագանու մոդելն ավելի շատ պրոֆեսիոնալ է, ոչ թե հասարակական: Դա նրանց ամենօրյա աշխատանքն է:

Երևան քաղաքի ավագանին, ըստ օրենքի, կատարում է հասարակական աշխատանք, որի համար չի վարձատրվում և ամենօրյա աշխատանք չի կատարում: Այլ մոդելով աշխատող քաղաքներում, ինչպես մեզ մոտ՝ Ազգային ժողովում, ամենօրյա աշխատանք է իրականացվում, որի համար վարձատրվում են, ունեն առանձին աշխատակազմ:

Այսօր նպատակահարմար չի լրացուցիչ ծախսերի հաշվին ձևավորել առանձին աշխատակազմ: Քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքն ամբողջովին բավարարում է և ծառայում է Երևանի ավագանուն:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Առաջարկում եմ քննարկել և Երևանը դարձնել Հայաստանում ՏԻՄ-ի հենց այն նախադեպը, որը ավագանուն կտանի դեպի պրոֆեսիոնալ մարմին: Առաջին քայլն արված է՝ խմբակցություններն ունեն փորձագիտական խումբ, ի՞նչ խնդիր է մյուս համայնքներում, օրինակ՝ Վանաձորում, որտեղ պարզապես չեն կարողանում բյուջե հատկացնել փորձագետների համար:

Կարծում եմ, որ ինստիտուցիոնալ առումով էլ այս տարանջատման ուղղությամբ պետք է քայլեր ձեռնարկել, որովհետև, ի վերջո, պրոֆեսիոնալ ավագանին ենթադրում է մի մասով, այո՛, Ձեր ասած գումարների տրամադրումը, մյուս մասով էլ ինստիտուտների տարանջատումը գործադիր և օրենսդիր մարմինների, նաև պրոֆեսիոնալ մարմնի համար ավագանու 65 հոգուց բաղկացած կազմը գուցե մեծ է:

Տարոն Մարգարյան

-Ժամանակը երբ գա, հնարավորություններն էլ ներեն, այդ հարցը կքննարկվի:

Հաջորդ հարցը՝ «ԵԼՔ» խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրե՛մ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ ես նոր տեղեկացա պարոն Բաղդասարյանից, որ բնապահպանության վարչության պետ պարոն Մարտիրոսյանն այստեղ չի, գործուղման է: Հարցս նրան էր ուղղված, բայց խնդրում եմ Դուք պատասխանեք կամ պարոն Բաղդասարյանը:

Փետրվար 6-ին պարոն Խաժակյանի հետ եղել ենք Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող թիվ 19 պոլիկլինիկայի բակում, որտեղ արձանագրել ենք, որ տեղի է

ունեցել ծառահատում և ասֆալտապատվել է նույն օրը: Մի քանի օր հետո այդտեղ կայանատեղի է կառուցվել: Այդ նույն օրը ես գրությամբ դիմել եմ Ձեզ՝ փորձելով պարզել, ո՞ր որոշման հիման վրա են այդտեղ ծառեր հատվել և ու՞մ կողմից:

Գրությանս պատասխան եկել է, որ, ըստ բնապահպանության վարչության կողմից ներկայացված տեղեկատվության, **19** պոլիկլինիկայի տարածքում իրականացվել են բակի բարեկարգման աշխատանքներ, որի շրջանակում կատարվել է թվով **6** ծառի մասնակի էտման և թվով **5** ծառի տեղափոխման աշխատանքներ: Քանի որ պատասխանն ըստ էության չէր և բավականաչափ լրոգված էր, երկրորդ գրությունով եմ դիմել՝ փորձելով ևս մեկ անգամ պարզել, թե որ որոշման հիման վրա են հատվել և տեղափոխվել թվով **5** այդ ծառերը, որտեղ են բնակություն հաստատել դրանք, եթե իհարկե տեղափոխվել են, որը քիչ հավանական է: Այս անգամ ևս ստացել եմ նույն լրոգված պատասխանը, որ բնապահպանության վարչության մասնագետների հսկողության և ցուցումների ներքո են տեղափոխվել: Ստացվում է բնապահպանության վարչությունն օդի մեջ ցուցումներ է տալիս, դրան որոշում չկա և կրկին անգամ չի պատասխանվել հարցին, թե որտեղ են բնակություն հաստատել այդ **5** ծառերը:

Խնդրում եմ պատասխանել ըստ էության և լիարժեք, եթե իհարկե կարող եք:

Տարոն Մարգարյան

-Բնապահպանության վարչության պետը գործուղման է, երբ վերադառնա Ձեր հարցին կպատասխանի:

Ինչ վերաբերում է պոլիկլինիկայի հետ կապված հարցին, կպատասխանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանը, խնդրեմ:

Դավիթ Օհանյան

-Շնորհակալությու՛ն, տեղեկացնեմ, որ այնտեղ իրականում ոչ մի ծառահատում չի եղել, եթե գիտեք նման դեպք փաստով ապացուցեք: Բնապահպանության վարչությունը ոչ թե լրոգված, այլ իրական պատասխան է ներկայացրել:

Հիմա, ըստ էության, Դուք գիտեք, որ այնտեղ գոյություն ունի շտապօգնության շարժական կայան, հիվանդանոց ու պոլիկլինիկա: Այնտեղ ճանապարհի երթևեկելի հատվածը շատ քիչ է և շատ ժամանակ շտապօգնությունը չէր կարողանում հիվանդին տեղափոխել: Տարածքն ազատ էր և հնարավորություն կար ճանապարհը լայնացնելու, դրանում է միայն խնդիրը:

Թեհմինա Վարդանյան

-Արձագանքեմ, պարո՛ն Օհանյան թույլ տվեք Ձեզ հետ չհամաձայնվել, որովհետև երբ մենք ամսի **6**-ին պարոն Խաժակյանի հետ այնտեղ էինք, դա փաստել են և՛ պոլիկլինիկայի բուժանձնակազմը և հարակից տարածքի բնակիչները, որ այդտեղ հստակ տեղի է ունեցել

ծառահատում: Մինչև մեր այնտեղ գնալը shamshyan.com կայքը մեկ օր առաջ նույնպես դա արձանագրել էր: Այնտեղ կայանատեղիի հետ կապված տարածքը բավականին լայն է, երբ ասում եք, որ շտապօգնության մեքենաները չեն կարողացել մտնել կամ պտտվել: Ես Ձեզ հավաստիացնում եմ, որ այնտեղ այդպիսի խնդիր չկա: Մինևույն է այնտեղ տեղի է ունեցել ծառահատում, պետք չէ դա հերքել, գոնե հրապարակային, շնորհակալ եմ:

Դավիթ Օհանյան

-Բերեք փաստերով ապացուցեք, որ այնտեղ ծառահատում է եղել, ես ասում եմ, որ այնտեղ մեկ հատ ծառ անգամ չի կտրվել: Եթե ունեք ապացույցներ, խնդրեմ բերեք միասին նայենք:

Թեհմինա Վարդանյան

-Պարո՛ն Օհանյան, մենք այնտեղ ուղիղ եթեր ունենք արած, նկարներ ունենք նաև, պարոն Խաժակյանը կողքից հուշում է, որոնք, կարծեմ, կցել եմ առաջին դիմումին և ուղարկել եմ:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, այդ պատճառով պարոն Օհանյանի խնդրանքն այն է, որ հստակ փաստեր ներկայացնեք, քանի որ մեր տեղեկատվության համաձայն այնտեղ ծառեր չեն եղել, թփեր են եղել և ընդամենը ճանապարհին է լայնացվել:

Թեհմինա Վարդանյան

-Պարո՛ն քաղաքապետ, ներողություն եմ խնդրում, բանավե՛ճ չդառնա, ուղղակի արձագանքեմ: Աշխատակազմի կողմից տրամադրված երկու գրության մեջ էլ հստակ նշված է, որ թվով 5 ծառ տեղափոխվել են, խնդրում եմ հստակ հասցե նշել, թե ուր են տեղափոխվել այդ ծառերը:

Տարոն Մարգարյան

-Շատ լավ, բնապահպանության վարչության պետը կլինի, անպայման այդ հարցին կանրադառնանք, Ձեզ կներկայացնենք:

Հաջորդ հարցը՝ «Ելք» խմբակցության անդամ Հարություն Բաբայան, խնդրե՛մ:

Հարություն Բաբայան

-Շնորհակալությու՛ն: Ես նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավար պարոն Մարգարյանին ինտերակտիվ աշխատելու համար, որովհետև օրեր առաջ ես տեղադրել էի վթար, մի քանի օր հետո արագ արձագանքեցին ու պատնեշը կառուցվեց, տեղադրվեցին աստիճանների բռնակները:

Հարցս ուղղված է Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարին, քաղաքացիները բողոքում են, որ «Ռիբոք» սպորտային կոմպլեքսի տարածքում շինարարության հետևանքով

բազմաթիվ ծառեր են հատվել: Յանկանում եմ հասկանալ, թե ինչքանով եք տեղյակ այդ ծառահատումներից և արդյոք կա պայմանավորվածություն, որ որոշակի ձևով այդ կանաչ գոտին կվերականգնվի կամ կբարեկարգվի:

Տարոն Մարգարյան

-Հարցին կպատասխանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Խաչատուր Կարապետյանը, խնդրե՛մ:

Խաչատուր Կարապետյան

-Նշեմ, որ այդ ամբողջ տարածքը «Ռիբոք» սպորտային կոմպլեքսի սեփականությունն է: Ծառահատումների հետ կապված, այնտեղ մի հատվածում ծառերի տեղափոխություն է արվել շինարարության հատվածից դեպի վերին մասը: Մնացած ամբողջ աշխատանքները կատարվում են օրենքի կետով, կա շինթույլտվություն և այնտեղ ոչ մի ապօրինի ծառահատում չի կատարվել:

Տարոն Մարգարյան

-Ավելացնեմ, որ այնտեղ մեծ ներդրումներ են իրականացվում: Սեփականատիրոջ կողմից ի սկզբանե, Երևան քաղաքի գենպլանի համաձայն, կառուցապատման աշխատանքներ էր նախատեսված: Կառուցվել է «Ռիբոք» մեծ սպորտային կոմպլեքսը, որն այսօր երևանցիների համար շատ սիրելի վայր է և շատերն են այցելում:

Նշեմ, որ հարակից տարածքում շարունակվում են ներդրումներ իրականացնել: Այդ հարցը քննարկվում է քաղաքաշինական խորհրդում, պետք է աշխատանքները շարունակելու հնարավորություն տալ:

Ինչ վերաբերում է ծառահատումներին, այդ տարածքը համարվում է քաղաքացու սեփականությունը: Այս առումով ասեմ, որ Դավթաշեն վարչական շրջանում ընդլայնվում է կենտրոնական այգու տարածքը, և եթե մի տեղում որոշակի կանաչ տարածք է պակասում, մյուս տեղում այն կրկնակի ավելացվում է: Սա նախատեսված է նաև Երևանի գենպլանով:

Հարություն Բաբայան

-Շնորհակալությու՛ն, հաջորդ հարցս ուղղում եմ պարոն Արեյանին: Նոյեմբեր ամսին ես հարց ուղղեցի, թե արդյոք Մաշտոցի պողոտայի ստորգետնյա անցման խնդիրը լուծված է, որպեսզի ջրահեռացման կամ ձնհալի դեպքում էքսեստներ չունենանք:

Պարոն Արեյանը պատասխանեց, որ ամեն ինչ բարեկարգված է, «Վեոլիա ջուր» ընկերության հետ կան պայմանավորվածություններ, ջրահեռացման խնդիրը լուծված է, և մենք պատրաստ ենք:

Հարցս հետևյալն է՝ հիմա տեղի ունեցող շինարարությունն արդյոք կապված չէ ջրահեռացման հետ և ինչքա՞ն ժամանակ կտևի այդ շինարարությունը:

Տարոն Մարգարյան

-Ամեն տարի գարնան և աշնան ամիսներին «Վեոլիա ջուր» ընկերության հետ Երևան քաղաքում հերթապահություն ենք իրականացնում, այն բոլոր տեղերում, որտեղ ունենք ջրահեռացման խնդիր: Նման խնդիր կար նաև Մաշտոցի ստորգետնյա անցումում:

Այս տարվա ծրագրով «Վեոլիա ջուր» ընկերությունն իր միջոցների հաշվին, իրականացնում է աշխատանքներ ջրահեռացման խնդրի վերջնական լուծման համար: Մեկ ամիս ժամանակ է անհրաժեշտ «Վեոլիա ջուր» ընկերությանը, որ կարողանան այս խնդիրն ամբողջովին լուծել:

Ցանկանում եմ նշել նաև, որ վերջին շրջանում բնակիչները մամուլում արձագանքել են Սարի թաղում ներքին ջրերի հոսքի խնդրին:

Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության, վարչական շրջանի աշխատակազմի, «Վեոլիա ջուր» ընկերության, համապատասխան ոլորտի բոլոր պատասխանատուների, նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցելով, փորձենք այս հարցը բարձրացնել, որպեսզի դեռևս խորհրդային տարիներից եղած այդ խնդրին լուծում տրվի:

Այս հարցը Երևանի քաղաքապետարանի լիազորության մեջ չէ, բայց քաղաքապետարանը պետք է մեր քաղաքացիների կողմից բարձրացրած հարցերը միանգամից տեղեկացնի համապատասխան կառույցներին:

Պարոն Արեյան, անհրաժեշտ է սա դարձնել օրակարգային հարց, որ մենք կարողանանք այս խնդիրը լուծել:

Հաջորդ հարցը՝ «Ելք» խմբակցության անդամ Զարուհի Բաթոյան, խնդրե՛մ:

Զարուհի Բաթոյան

-Շնորհակալությու՛ն, ես երկու հարց ունեմ: Առաջինը՝ Պարոն Մարգարյան, մի խնդրի մասին եմ ուզում խոսել, որի մասին բազմիցս բարձրաձայնել ենք: Վերջերս Երևանի թվով 5 դպրոցում նորից մոնիթորինգ ենք իրականացրել, մասնակցային մոնիթորինգ, այսինքն՝ հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների մասնակցությամբ:

Մոնիթորինգի արդյունքները կրկին ցույց են տվել, որ վերակառուցված դպրոցները չափանիշներին չեն համապատասխանում, որը **2007** թվականից պարտադիր է: Գիտեմ, որ այս խնդիրն առկա է, կա մոնիթորինգի և վերահսկողության խնդիր, քանի որ շատ հաճախ, նույնիսկ եթե նախագծում չափանիշները կան և այդպես է հաստատվում, ապա վերջում արդյունքն այլ է լինում: Ակնհայտ է, որ արդյունավետ չի այն մեխանիզմը, որով աշխատում է քաղաքապետարանը, որովհետև վերջում այս բացթողումները միշտ ի հայտ են գալիս թե՛ դպրոցում, թե՛ որևէ ուրիշ կառույցում:

Հարցս հետևյալն է, արդյոք չեք մտածում բարելավելու մոնիթորինգի կամ վերահսկողության մեխանիզմները կամ նոր բան ստեղծելու: Այս իրավիճակն արդյոք չի՞ մտահոգում Ձեզ, որովհետև փորձը ցույց է տալիս, որ այսպես շարունակելն անարդյունավետ է: Այստեղ թե՛ համայնքային, թե՛ պետական բյուջեի գումարներն են ծախսվում, թե՛ մասնավոր ներդրողների գումարներով վերակառուցված դպրոցները վերջում նորից անմատչելի են:

Տարոն Մարգարյան

-Ես համամիտ չեմ Ձեզ հետ: Նկատել եմ, որ միտում ունեք վերջին տարիների մեր կատարած աշխատանքը չնկատելու և փորձում եք ցույց տալ, որ Դուք ավելի շատ եք մտահոգվում, քան մենք:

Տեղեկացնեմ, որ վերջին տարիներին Երևան քաղաքում այդ ուղղությամբ մեծ ծավալի աշխատանք է իրականացվել, իսկ այն դպրոցներում, մանկապարտեզներում, շենքերում, որոնք կառուցվել էին խորհրդային տարիներին, բնականաբար, հաշմանդամների մատչելիությունն ապահովված չի եղել:

Ո՞վ է վերանորոգել այդ դպրոցները, առաջինը հարցը պետք է ուղղել վերանորոգողներին: Վերջին շրջանում, բացի մեկ դպրոց կապիտալ վերանորոգելուց, ուրիշ դպրոց չենք վերանորոգել: Կապիտալ վերանորոգման մեջ էլ նախատեսված չեն եղել նախագծային փոփոխություններ իրականացնել, ուղղակի եղածը վերանորոգվել է:

Խնդրի լուծման համար անհրաժեշտ է ժամանակ: Հասարակական կազմակերպությունները, եթե քննադատելուց բացի խորհուրդներով օգնեն, աջակցեն և մեր կողքը կանգնեն միասին անենք այդ գործը, արդյունքի կհասնենք, իսկ եթե ուզում եք մեր գործը սևացնել, չի ստացվի, որովհետև հսկայածավալ աշխատանքներ կատարվել են և առաջիկայում կատարվելու են:

Զարուհի Բաթոյան

-Պարոն Մարգարյան, մտադրություն չկա որևէ մեկին փնտելելու: Ես Ձեր կողքին կանգնած եմ այնքանով, որ այսօր ավագանու անդամ եմ, իմ բոլոր հարցերն ու առաջարկներն ուղղված են Ձեզ օգնելուն: Այն արդյունքները, որոնք ներկայացնում եմ, նշեցի ինչպես են հավաքագրվել: Իմ նշած արդյունքներն ընդամենը 5 դպրոցի են վերաբերում, սա ամբողջական պատկեր չէ, բայց, կարծում եմ, որ մյուս դպրոցներում էլ այդ խնդիրը շատ չի տարբերվում:

Հարցս հետևյալն էր, մտահոգված չենք, որ ներդրումներ ունենալու պարագայում արդյունքում ստացվում է ոչ այն, ինչ ցանկանում էինք: Որևէ մեկի բարի ցանկությունների վրա չեմ կասկածում, սակայն քաղաքապետարանը և այդ դպրոցները շատ ավելի մեծ

գումարներ են ստանում և ֆինանսներ ունեն, քան մեր կազմակերպությունը, որը հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություն է և որևէ այլ շահույթ չի հետապնդում, քան հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների ստեղծումը:

Երկրորդ հարցը վերաբերում է տրանսպորտի խնդրին: Գիտեմ, որ տրանսպորտային ցանցը բարեփոխվում է և չափանիշների մշակման ժամանակ բազմիցս նշվել է, որ անպայման հաշվի են առնվելու մատչելիության չափանիշները, գիտեմ դեռ մշակված չեն: Քանի որ այդ ավտոբուսները նաև տարբեր են լինելու և իրենց չափերով, կցանկանայի իմանալ, արդյոք մատչելիության չափանիշները մշակելիս բոլոր ավտոբուսների համար ենք դա նկատի ունենալու: Շնորհակալություն:

Տարոն Մարգարյան

-Այո՛, այդ չափանիշները գործելու են բոլոր ավտոբուսների համար: Մեր ցանկությունը և պահանջն է լինելու դա, երբ վերջնական փաթեթն ունենանք, Դուք էլ անպայման կձանոթանաք, Ձեր կարծիքը և ցանկությունը հաշվի կառնվի:

Զարուհի Բաթոյան

-Շնորհակալություն՛:

Տարոն Մարգարյան

-Խնդրե՛մ, հաջորդ հարցը՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Ռոզա Սիրունյան, խնդրե՛մ:

Ռոզա Սիրունյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, խնդրում եմ Ձեզ տրամադրել տեղեկատվություն, թե ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում մայրաքաղաքում Էրեբունի-Երևան **2800**-ամյակի տոնակատարությունների շրջանակներում:

Տարոն Մարգարյան

-Այս տարի ունենք շատ կարևոր երեք միջոցառում՝ մայիս ամսին Առաջին հանրապետության **100**-ամյակը, Երևանի հիմնադրման **2800**-ամյակը և Ֆրանկոֆոնիայի **17**-րդ գագաթնաժողովը: Երեքն էլ կարևոր միջոցառումներ են և անցկացվելու են Երևանի քաղաքում: Այդ երեք միջոցառման համար ստեղծված են պետական հանձնաժողովներ, որոնցում ներգրավված են Երևանի քաղաքապետարանից ներկայացուցիչներ:

Երևանի հիմնադրման **2800**-ամյակի առթիվ հանձնաժողով է ստեղծվել նաև Երևանի քաղաքապետարանում, որը մեծ ծավալի աշխատանքներ է իրականացնում: Այժմ Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը համառոտ տեղեկատվություն կներկայացնի կատարված աշխատանքների մասին:

Արամ Սուքիասյան

-Շնորհակալությու՛ն, ձևավորված աշխատախումբը բավական ժամանակ է, որ աշխատում է և արդեն ուրվագծված են բոլոր ծրագրերը. շուրջ **50** մշակութային, գեղարվեստական, սպորտային, գիտական, ուսումնաճանաչողական միջոցառումներ են մշակված: Դրանց զգալի մասին արդեն ձեռնամուխ ենք եղել՝ ունենալով ստեղծագործական միավորումներ: Ինչպես հայտնի է մրցույթ հայտարարվեց Երևանի հիմնադրման **2800**-ամյակի լոգոյի և խորհրդանիշի համար և հրապարակվեց, ինչպես պաշտոնական, այնպես էլ մշակութային և ժամանցային լոգոտիպերը, արդեն ունենք երկուսը: Մրցույթներ են հայտարարվել և՛ կարճամետրաժ ֆիլմի, և՛ թատերարվեստի, մասնավորապես պիեսի, թատերգության, և՛ համահայկական երկի ոլորտներում: Տեղի կունենան մի շարք գիտաճանաչողական միջոցառումներ, մասնավորապես՝ կցանկանայի առանձնացնել միջազգային գիտաժողովը, որը հայագիտությանն է վերաբերում: Այստեղ շատ կարևոր է մեզ համար ակադեմիկներին և նշանակալի անձանց այցը մայրաքաղաք:

Հիմնական միջոցառումները տեղի են ունենալու սեպտեմբեր ամսին, թեպետ մեկնարկելու է հունիս ամսից և ունենալու ենք բազմաթիվ ֆլեշմոբեր, այդ թվում Հանրապետության հրապարակում **2800** երեխաների մասնակցությամբ շախմատի առաջնություն, պարի ֆլեշմոբ, ինչպես նաև Կասկադ համալիրում **2800** անձից բաղկացած երգչախումբը կկատարի Երևանի օրհներգը:

Բուն միջոցառումները սեպտեմբերի **29**-ին և **30**-ին են լինելու, որոնք տեղի են ունենալու Երեբունի պատմահնագիտական արգելոց թանգարանի բլրի վրա՝ ամրոցում և Հանրապետության հրապարակում, որոնք կհանդիսանան գագաթը:

Առաջիկայում այս առիթով տեղի կունենա մամլո ասուլիս, որի ժամանակ մանրամասն կանդրադառնանք այս հարցերին, կհրապարակվի կայքը, որտեղ կներառվեն բոլոր ծրագրերը:

Ռոզա Միրունյան

-Շնորհակալությու՛ն:

Տարոն Մարգարյան

-Կոչ ենք անում ավագանու անդամներին ակտիվ մասնակցություն ունենալ այս գործընթացին:

«Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամներ Աստղիկ Գևորգյանը և Արմեն Երեմյանը հանել են իրենց հարցը:

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի՛ անդամներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն՝ն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան